



Ապա աշխարհի թափերաբեմին վրայ երեւեցան օսմանեան թուրքերը 1453 թուականին՝ փապալելով Բիզանդիոնի քրիստոնեայ կայսրութիւնը: ԺԶ դարուն օսմանցիները 50 փարիներ շարունակաբար Նայասփանը իրարայաջորդ պապերագմներու եւ կռիւներու դաշտի վերածեցին: Եւ այսպէս յաճախակի մասսայական կոտորած մինչեւ վրայ կը հասնեն համիդեան ջարդերը ու 1915-ի հայաջինջ Եղեռնը:

Իսկ մեր ժողովուրդի պապմութեան գիրքը ինչպի՛սի վկայութիւն կ'արձանագրէ մեր մասին: Այսպեղ պիտի կարդանք հրաշքի համագօր սխրագործութիւններու վերաբերեալ ոսկեղենիկ էջեր, որոնք կը կազմեն մեր փառքն ու պատիւը: Այո՛, հայ ժողովուրդը եղած է փնտրուած ազգութիւն, այնքանով որ մեր զանազան կարողութիւններու հետեւանքով այլազգի փիրակալներ հայերու թիւը բռնի ուժով աւելցուցած են իրենց երկրի սահմաններէն ներս վերականգնելու դիտաւորութեամբ իրենց քաղաքներն ու կարենոր կեդրոնները: Ուր որ գտնուեցանք, բարգաւաճեցուցինք ու շէնցուցինք այդ վայրերը, զի եղանք չարքաշ երկրագործներ, ուշիմ առեւտրականներ, բանիմաց փնտրեալագէտներ, յաջող վաճառականներ, կառուցանող արհեստարարներ, փայլուն արուեստագէտներ արուեստի զանազան բնագաւառներու մէջ:

Մեր ձեռքերը եղած են ու կը մնան ճարտար, մեր հոգիները՝ բարի, մեր սրտերը՝ ազնիւ, մեր ոգեկանութիւնը՝ սպեղծագործ, ու մեր ազգային նկարագիրը եղած է ու կը շարունակէ ըլլալ հանճարեղ՝ որպէս եռանդուն, անձնուէր ու հայրենասէր հայու գաւակունք: Սիրած ենք գիրն ու գրականութիւնը եւ ուր ալ գտնուեցանք, ծաւալեցինք կրթական ու մշակութաստեղծ աշխատանք: Ուր որ կայք հաստատեցինք, մեր իսկ ջանասիրութեամբ եղանք ոսկեհանք՝ շէնցնելով ու զարգացնելով այն ամէնը, որոնց հպան մեր շինարար բազուկները:

Ու մենք Իրաքահայերս գաւակներն ենք նոյն հմուտ, հնարագէտ ու սպեղծագործ արմենական ցեղին: Նման մեր արիւնակիցներուն, որոնք աշխարհով մէկ այսօր հաւաքուած են իրենց ապրած երկիրներու Նայ եկեղեցիներու կամարներուն ներքոյ կամ միութենական կեդրոններու մէջ: Ահաւասիկ մենք եւս մէկտեղուած ենք յայսմ առաւօտուս ըսելու աշխարհին թէ՛

Մեր դէմ սանձազերծուեցաւ ահաւոր ոճիր

Որուն առ ի հետեւանք մենք վերածուեցանք փարպղնուած ու ցանուցրի ժողովուրդի

Եւ ականայ սփիւռքանալով կ'ապրինք փարբեր երկիրներու մէջ՝ ամէն օր ու ամէն պահ ենթակայ սպիտակ ջարդի:

Բայց անցնող 94 փարիներու փետողութեան մենք կամքը ունեցանք՝ պրկելու մեր հայեցի ինքնութեան լարերը, ուղղեցինք մեր մէջքը ու սերունդ առ սերունդ դուրս եկանք զոհ ըլլալու հոգեբանութենէն եւ թօթափեցինք մեր վրայէն ողբացողի ու լալկանութեան ցնցոյթները: Այժմ մենք ազգովին վերածուած ենք պահանջատէրի՝ այն խոր գիտակցութեամբ, թէ դժուար է սպիացնել եղեռնի եւ ցեղասպանութեան թողած վերքը, բայց հնարաւոր է զայն մասամբ ամոքել արդարութեան վերահաստատումով անպայմանօրէն իրականանալի այն պահուն, երբ վերափրանանք մեր պապմական հողերուն եւ արդար հապուցում ստանանք:

Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյս բակը կանգնած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բերուած Ապրիլ 24-ի նահապաղաց նուիրուած խաչքար-յուշարձանը: Նայրենի վարպետի մը (Մաքսիմ անունով) ձեռքով փորագրուած խաչքարը խորհրդաւոր կամուրջ մըն է Մայր Նայրենիքի եւ մեր միջեւ, Սփիւռքի հայութեան եւ Իրաքահայութեան միջեւ: Ու

մենք քիչ վերջ թափօր կազմած պիտի ուղեորուինք դեպի յուշարձանը, ուր գեպեղուած կան մասունքներէն Տէր-Զօրի անշիրմաքար աւազներուն մէջ թաղուած հայ նահապարակներու: Իրաքահայերուն կանգնեցուցած յուշարձանին ընդերքը կը հանգչին Վանի ճակատամարտին մասնակից երկու հերոսներու՝ Լեւոն Փաշա Շաղոյեանի եւ Ազատ Սիմոնեանի աճիւնները, ուր քեղադրուած է նաեւ փոքրիկ փութքար մը՝ բերուած մեր իսկ ձեռքով Ղայասարանի Սպիտակ քաղաքէն, շրջան, որն աւելի քան քսան տարիներ առաջ դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու տասնեակ հազարաւոր հայերի՝ որպէս զոհ 1988-ի երկրաշարժին:

Սա պահուն Ձեր հետ միասնաքար մեր ներկայութիւնը կը բիրեղացնէ յիշարակը մէկ եւ կէս միլիոն նահապարակներուն, որոնք եղան խունկ ու պարարագ՝ մարտուցուած ազգիս զոհասեղանին վրայ այն հաւատամքով, որ մեր Տիրոջ աշխարհաստան յարութիւնը երաշխիքն է նաեւ հայազգի բոլոր ժամանակներու նահապարկաց կամաւոր զոհաբոսութեան յաղթանակին:

Մենք այլեւս ո՛չ յուսաբեկ ենք, ո՛չ ալ ընկճուած: Ունինք վերապրելու յամառ կամք, սրեղծագործելու վառ ոգի եւ պարբաստակամ ենք ցուցաբերելու յառնելու հզոր ճիգ ու մաքառում, զի այսօր կանգնած ենք մեր հարազատ եկեղեցոյ կամարներուն ներքոյ՝ ընդունելու անմեղ հայ մարտիրոսներու անմեռ յիշարակը՝ որպէս ուղեցոյց մեր անշէջ լինելութեան՝ այսօր եւ վաղը եւ միշտ:

Այս ժամը Ապրիլ 24 անունով յարկանշուած նահապարկաց պահն է: Ազգովին կապրինք սուգ, սակայն անոնց իմացեալ զոհաբերութիւնը ու վերապրող հայ սերունդներու դարապարտող եւ պահանջատէր ըլլալու անգիջող վճռականութիւնը տասնեակ տարիներու քննողութեան արդէն սկսած է իր արդիւնքը տալ աշխարհի զանազան պետութիւններու թափերաբեմներու վրայ: Շատ մը երկիրներու խորհրդարաններն ու կառավարութիւնները սկսած են ճանչնալ Ապրիլ 24-ով ծանօթ տխուր եղելութիւնը եւ զայն սահմանել որպէս «Ցեղասպանութիւն»: Նոյնիսկ ժամանակակից Թուրքիայէն այսօր ձայներ կը բարձրանան վասն ճշմարտութեան ճանաչման եւ ի խնդիր արդարութեան հարուցման հայ ժողովուրդի նկատմամբ իրագործուած եղեռնին համար:

Այո՛, Ղայոց Եղեռնի ահաւոր ողբերգութեան ընթացքին զոհուեցան մէկ ու կէս միլիոն մերազն զաւակունք այսօրուաններուս վերածնունդի տեսլականով, Ղայասարան աշխարհի վերականգնումի երազանքով եւ հայրենի պետութեան վերահաստատման ստոյգ հեռանկարով: Այսպէս է, որ պարտուած, հիւծուած, ընչազուրկ, թալանուած, ցանուցրի եւ սպանդի ենթարկուած մեր ժողովուրդը, կրկնելով մարգարէի խօսքը թէ՛ «Փրկութեան բաժակը պիտի առնեն եւ Տիրոջ անունը պիտի կանչեն» եւ ի ձեռին պահելով իր իսկ արիւնով լի սկիւղ, ցեղասպանութենէն քիչ ժամանակ անց կերպեց Սարդարապատի, Ղարաքիլիսայի եւ Պաշ-Ապարանի յաղթանակները 1918-ի Մայիսին, որով բացուեցան յուսոյ դռները, եւ վերածնալ Ղայոց Ղայրենիքը՝ յաւերժական Արարատի հայացքին ներքոյ:

Ղայ ժողովուրդին մղած ազատագրական պայքարի ճանապարհին աւելի քան դար մը առաջ «Չայն մը հնչեց Էրզրումի Ղայոց լեռներէն» եւ անցնելով զանազան ճակատամարտերէ գոչեց՝ «Զարթիր, լաօ, մըռնիմ քըզի»: Ու այդ նուիրական ձայնը արձագանգ գտաւ ամենուր՝ մեր պարմական հողերուն վրայ: Այսօր մենք եւս կոչուած ենք հնչել պահելու հայ ժողովուրդին դարին ձայնը մինչեւ այն օրը, երբ ձեռք բերենք մեր արդար իրաւունքները:

Բացառապես արժեքաւոր ազգօգուտ այս կեցուածքը յաջողցնելու դիպաւորութեամբ կարիք ունինք միասնական աշխատանքի եւ Նայասրանեայց Առաքելական մայրենի Եկեղեցոյ հարազատ զաւակները ըլլալու եւ մնալու հրամայականին՝ ընդ հովանեաւ Ս. Էջմիածնի:

Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Նարութեան ոգեկանութեամբ րոգորուն՝ եկէք այս սուրբ պահուն աղօթենք, որ Արարիչն Աստուած երանաւէր լոյսերու մէջ պահէ ազգիս մարտիրոսներուն հոգիները արդարներուն համար վերապահուած Եդեմին մէջ: Թող Սուրբ Նոգին մխիթարէ հայ ժողովուրդը, ու յարուցեալ Տէրը զօրացնէ մեր սրտերը՝ հաւաքարիմ մնալու նահապակաց ուխտին եւ յաւերժական կրակին:

Թող ամենակարողն Աստուած օրինէ մեր Մայր Նայրենիքը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Արցախը ու հայ Սփիւռքը՝ բոլորին պահելով անվրանգ ու անփորձանք, միշտ բարգաւաճ ու ծաղկուն, միշտ լաւարես դէպի աւելի լուսազարդ ապագան:

«Խունկ եւ աղօթք ապրիլեան հերոսներու անմեռ յիշարակին այժմ եւ միշտ»։ Ամէն: